ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0077, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26

«21» 11 2012 թ.
Հ 1/1-2108

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԸՆ Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան,

Թուրքմենստանի նախագահ Գ.Բերդիմուհամեդովի ս.թ. նոյեմբերի 29-30-ը կայանալիք պաշտոնական այցի շրջանակներում «Հայաստանի Հանրապետության կառավարության և Թուրքմենստանի կառավարության միջև առևտրական ներկայացուցչությունների փոխադարձ հիմնման մասին» համաձայնագիրը ստորագրելու առաջարկության կապակցությամբ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմը չի առարկում համաձայնագրի ստորագրմանը:

Միաժամանակ, առաջարկում ենք Թուրքմենստանում ՀՀ առևտրական ներկայացուցչության բացման խնդրին անդրադառնալ առևտրաշրջանառության բավարար ծավալներ արձանագրելու պարագայում:

Հարգանքով՝

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հ.Հ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
010-30955
22 11 2012